ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Երևան, Ձորափի 40
Հեռ.՝ 53-66-12, ֆաքս՝ 53-92-53

№ 124

«06» 02 2017 թ.

«Հռիփսիմե Հակոբյան» ԱՁ և «Մեդսերվիս» ՍՊԸ կոնսորցիում,
ԱՁ Հռիփսիմե Հակոբյանին
և «Մեդսերվիս» ՍՊԸ տնօրեն Ս.Իրիցյանին

Հարգելի գործընկերներ

«ՇԲՕ-ՇՀԾՁԲ-17/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 22.12.2016թ. «Հռիփսիմե Հակոբյան» ԱՁ և «Մեդսերվիս» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացվել է հայտ, որի արդյունքում կոնսորցիումի հետ 30.12.2016թ. կնքվել է «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար բուժսարքավորումների տեխ.սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման թիվ «ՇԲՕ-ՇՀԾՁԲ-17/3» գնման պայմանագիրը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ գնումների պաշտոնական տեղեկագրի «գործող շրջանակային համաձայնագրեր», «սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ» բաժնում, կոնսորցիումի մասնակից ԱՁ Հռիփսիմե Հակոբյանը գրանցված է 28.12.2016թ-ից, այնինչ «ՇԲՕ-ՇՀԾՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 22.12.2016թ-ին, ինչը նշանակում է որ ԱՁ Հռիփսիմե Հակոբյանը և «Մեդսերվիս» ՍՊԸ-ն, որպես միասնական կոնսորցիում չէին կարող հանդիսանալ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակից՝ համաձայն ՀՀ կառավարության 10/02/2011 թվականի № 168-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 35-րդ կետի 6-րդ մասի բ. ենթակետի:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10/02/2011 թվականի № 168-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 36-րդ հոդվածի 8-րդ կետը «Շտապբուժօգնություն» ՓԲ ընկերության և «Հռիփսիմե Հակոբյան» ԱՁ և «Մեդսերվիս» ՍՊԸ կոնսորցիումի միջև 30.12.2016թ. կնքված թիվ «ՇԲՕ-ՇՀԾՁԲ-17/3» պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է:

Տնօրեն՝ Թ.Ստեփանյան